


ԲԱՑ ՆԱՄԱԿ

Թուրքիայի Հանրապետության նախագահ Աբդուլահ Գյուլին ուղղված բաց նամակի տակ ստորագրած

Հայաստանի հարգելի մտավորականներ.

Քանի որ ձեր «Բաց նամակ»-ի բովանդակությունը համազգային է՝ հայ ժողովրդի դեմ կատարված ցեղասպանության վերաբերյալ, ուստի յուրաքանչյուր գիտակից հայ կրելով տառապանքի իր բաժինը, ունի նաև իրավունք պահանջատիրության, բողոքի, քննադատության, և ինչպես նաև հարցի լուծման ուղղությամբ տարվող աշխատանքներին մասնակցելու պարտականություն:



Արևմտյան Հայաստանը առաջին հերթին Սփյուռքով մեկ սփռված՝ ցեղասպանության ենթարկված արևմտահայության շառավիղների հայրենիքն է, ուստի հարցի ցանկացած լուծում, քննարկում, առաջարկությունն առանց սփյուռքի գիտակից հայության կարծիքը հաշվի առնելու, անընդունելի է: Օգտվելով սփյուռքահայի իմ իրավունքներից, ցանկանում եմ իմ տեսակետները հայտնել Թուրքիայի Հանրապետության նախագահին ուղղված «բաց նամակ»-ի կապակցությամբ:

1. Ըստ իս «Բաց նամակ»-ը պետք է ուղղված լիներ ոչ թե Թուրքիայի Հանրապետության նախագահին, այլ Թուրքիայի Հանրապետության մտավորականությանը, մարդկանց, ովքեր փորձում են ազատագրվել շովինիզմից ու փանթուրքիզմից և կոչված են կարծիք ստեղծելու ու երկրի պարզ զանգվածների գիտակցությանը հասցնելու հայոց դեմ կատարված ցեղասպանության փաստը, դրանով իսկ ժողովրդավարությունն ապահովելու իրենց երկրում:
2. Հրանդ Դինքը իր եղերական մահով հայ ժողովրդին ու հայ մտավորականությանը փաստեց, որ Մեծ Եղեռնի հետ կապված հարցերի հանգուցալուծումը կարող է կատարվել միայն ժողովրդավարական Թուրքիայի պայմաններում: Հ. Դինքը բազմիցս շեշտեց. Թուրքիայի պարզ քաղաքացին մերժում է հայոց դեմ կատարված ցեղասպանությունը զուտ այն պատճառով, որ նա այդ մասին անտեղյակ է: Ելնելով մեծ նահատակի պատգամներից, ձեր նամակի հասցեատերերը պետք է լինեին թուրք ժողովուրդը և ձեր գործընկերները՝ թուրքիայի մտավորականությունը: Աբդուլահ Գյուլը Թուրքիայի Հանրապետության նախագահն է և իր երկրի շահերի պաշտպանը: Նա անշեղորեն հետևում է փանթուրքիստական ազգայնական գաղափարախոսությանը:

3. «Բաց նամակ»-ի մեջ դուք օգտագործել եք երկու շատ կարևոր բառեր՝ **«Ճանաչում», «պահանջատիրություն»**: Եթե ցեղասպանության ճանաչմանը հետևելու են պահանջները, փոխհատուցումը Արևմտահայության զանգվածային բնաջնջման, Արևմտյան Հայաստանի տարածքի, այո, ամեն ինչ ասված է, իսկ եթե լոկ ցեղասպանության փաստի ճանաչումը նկատի ունեք, ապա մեղմ ասած, վիրավորական է հայ ժողովրդի համար: Հնարավոր է Թուրքիան մի հարմար առիթով, մի դիպլոմատիկ հայտարարություն կատարի, օրինակ. հայերը իրավացի են, մենք էլ ցավում ենք կատարվածի համար, բայց հայերը առնելիք չունեն: Այս դեպքում միլիոնավոր հայեր Սփյուռքում, նաև Հայաստանում, ձեզ հետ համաձայն լինել չեն կարող:
4. «Բաց նամակում» գրում եք. **«Անկեղծորեն ընդունենք՝ այս հարցը բաժանել է երկու ժողովուրդներին 1915 թվականից ի վեր: Այն խոսվել է հայերի եւ թուրքերի հավաքական գիտակցությունը եւ պայմանավորել մեր քայլերը՝ անկախ ամենօրյա քաղաքականության բազմապիսի հրամայականներից»**:

Նախ այս սենտիմենտալ գրելառճը անհասկանալի է, ապա պետք է նշել, որ վերը նշված մտքերն ու թվականը սխալ են: Հայտնի է, որ հայոց դեմ կազմակերպված զանգվածային կոտորածներ տեղի են ունեցել նաև 19-րդ դարում, իսկ 1915 թվականը ցեղասպանության ամենադաժան ժամանակահատվածի տարեթիվն է: Թուրքերը 1915 թիվը համարում են պատերազմի տարի, իսկ հայոց տեղահանումները որպես պատերազմի հետ կապված ապահավական միջոցառումներ: Հայ-թուրքական հարցը, հայոց դեմ գործադրված ցեղասպանության սկիզբը, տեղափոխելով 1915թ. դուք ակամայից հաստատում եք թուրքերի պնդումներն այն մասին, որ ծրագրված ցեղասպանությունն տեղի չի ունեցել, այլ մարդիկ գոհվել են պատերազմի ընթացքում:

5. Ապա «Բաց նամակ»-ում հորդորում եք Թուրքիայի Հանրապետության նախագահին և ակնկալիքով գրում եք. **«Կարծում ենք՝ սա (ցեղասպանության ճանաչումը) առաջին հերթին հենց թուրք ժողովրդին է անհրաժեշտ: Այդպիսով նա կազատվի պատմության բեռից և բաց ճակատով կկանգնի մյուս պետությունների կողքին...»**: Պարզվում է ձեզ խորապես մտահոգում է թուրքերի ոչ բաց ճակատ լինելու հանգամանքը: Այստեղ ամենայն վճռականությամբ կուզեի խնդրել ձեզ և ձեր «բաց նամակ»-ին միացած Սփյուռքի շուրջ 40 մտավորականներին, որպեսզի քաղաքացիական արիություն ու պատասխանատվություն (civilkurage) ցուցաբերեիք և մի նամակ էլ ուղղեիք Հայաստանի Հանրապետության նախագահ պարոն Սերժ Սարգսյանին, պահանջելով, որպեսզի վերջ տրվի մարդու իրավունքների ոտնահարումը երկրում, որ հայը ազատ ապրի իր հայրենիքում, և օր առաջ ազատ արձակվեն այլախոհներն ու քաղբանտարկյալները, **որպեսզի Հայաստանն էլ բաց ճակատով կանգնի մյուս պետությունների կողքին**:

Շարունակում եք **«... միայն այդպես է հնարավոր փակել այս էջը և համարձակ քայլ անել դեպի ապագա»**:

Այսինքը փակե՞լ Մեծ Եղեռնի պատմության էջը: Այս միտքը անճիշտ տրամաբանության հետևանք է: Ինչպե՞ս կարել է փակել հայոց դեմ գործադրված ցեղասպանության պատմության էջը, երբ դուք ինքներդ նույն տեղում հստակորեն նշում եք՝

«Պարո՛ն նախագահ, այս դեպքում գործ ունենք մարդկության դեմ գործադրված ահռելի ոճիրի հետ, որն անժամանցելի է: Մա ոչ միայն համայն հայ ժողովրդի ընդհանրական պահանջատիրությունն է, այլև՝ համաշխարհային հանրության արդար ակնկալությունը: Հայոց Ցեղասպանությունը հանցագործություն է մարդկության եւ ներկա քաղաքակրթական արժեքների դեմ, եւ որեւէ անհատ, կազմակերպություն, անգամ պետական իշխանություն ի գորու չէ հարցականի տակ առնել կատարվածը»:

Անթույլատրելի է, որ Հայաստանի ավելի քան 300 մտավորականներ՝ (Պերճ Զեյթունցյան՝ գրող, Սոս Սարգսյան՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, Զորի Բալայան՝ գրող, հրապարակախոս, Լեւոն Անանյան՝ Հայաստանի գրողների միության նախագահ...ու այդ թվում նաև հարգարժան գիտնական՝ պատմաբան Վլադիմիր Բարխուդարյանը) այսպիսի իրարամերժ վրիպում են թույլ տալիս այսքան կարևոր հարցի շուրջ: Պատմություն կոչված գիտությունը հենց այն բանի համար է, որ ոչինչ չմոռացվի, որ ոչ մեկ էջ չփակվի և պատմության հիշողության միջոցով ամեն ինչ փոխանցվի հաջորդ սերունդներին, որպեսզի կանխվեն համանման ոճրագործությունները:

6. Անհասկանալի է ձեր կողմից ցուցաբերած աճապարանքի հանգամանքը («ստորագրահավաքը կազմակերպվել է մեկ շաբաթվա ընթացքում»): Ինչո՞ւ կարևոր չհամարեցիք հարցնելու Սփյուռքի կարծիքը, երբ Հայաստանում ամեն օր հոլովվում է՝ մեկ ժողովուրդ, մեկ պատմություն, մեկ ճակատագիր կարգախոսերը և ստեղծվում է Սփյուռքի նախարարություն:

Հարգանքներով՝

- Մեծ Եղեռնի 50-ամյակի Երևանի ցույցի մասնակից,
- Ստոքհոլմի Թագավորական Տեխնոլոգիական Ինստիտուտի դասախոս

Դոկտոր Արամայիս Միրզախանյան

Ստոքհոլմ, Շվեդիա

Aramais.m@live.se